Քեյլին պարզապես ուզում էր ընկեր ունենալ:

Միայնակ ընդմիջում

Ստեյսի Լին Կարոլ
(Հիմնված է իրական պատմության վրա)

*“The Holy Spirit whispers with a still small voice” (*Children’s Songbook, *105).*

Քեյլին ներս մտավ ճաշարան և նայեց շուրջը: Մնացած բոլոր երեխաները վազում էին ուղիղ իրենց ընկերների մոտ և հավաքվում սեղանի շուրջ: Մենյակում աղմուկ էր բարձրանում ոգևորված ձայներից և երջանիկ ծիծաղներից: Դա դպրոցի ընդամենը երկրորդ օրն էր, բայց կարծես բոլորը ունեին մեկը, ում կողքին կարող էին նստել, բացի Քեյլիից:

Նա սեղմեց իր ճաշի տուփի բռնակը և քայլեց դեպի սեղաններից մեկը: «Կարո՞ղ եմ նստել ձեր մոտ»: Հարցրեց Քեյլին:

Երկան՝ շագանակագույն հյուսով աղջիկը վեր նայեց: Նա զայրացած շարժեց գլուխը: «Ոչ: Այստեղ զբաղված է»,- ասաց նա:

«Լավ»: Քեյլին շարժվեց դեպի մեկ այլ ազատ տեղ և ցած դրեց իր տուփը:

«Դուք չեք կարող այստեղ նստել: Ինձ խնդրել են պահել այդ տեղը»,- ասաց կանաչ գծավոր վերնաշապիկով մի տղա: Նա հրեց ու վայր գցեց Քեյլիի տուփը: Նրա բոլոր ընկերները ծիծաղեցին:

Քեյլին կռացավ ու նորից վերցրեց իր տուփը: Նա քայլեց մինչև ճաշարանի վերջը և նստեց ազատ սեղանի շուրջը: Նա տեսավ իր հարևանությամբ ապրող մեկին և փորձեց ձեռքով անել, սակայն նա նայեց այլ ուղղությամբ: Քեյլին տխրեց: Ինչո՞ւ ոչ ոք չէր ցանկանում լինել իր ընկերը:

Քեյլին նայեց իր ուտելիքին: Նա այլևս ուտելու ցանկություն չուներ: Նրա աչքերը լցվեցին, նա փակեց իր տուփը և դուրս գնաց:





Բոլորն արդեն խաղում էին իրենց ընկերների հետ: Քեյլին միայնակ նստել էր նստարանին և նայում էր, թե ինչպես էին ուրիշ երեխաներն ուրախանում առանց իրեն: Ապա Քեյլին նկատեց գրեթե իրեն հասակակից մի տղայի, ով մենակ նստել էր խոտերի մեջ: Նա հագել էր դեղին բծերով շապիկ, իսկ մազերը հետ էին սանրված:

Քեյլին նայեց հեռուն: Նա տեսավ իր դասարանի մի խումբ աղջիկների, ովքեր խաղում էին: Նա երազում էր, որ իրեն հրավիրեին խաղալ իրենց հետ:

Քեյլին նորից նայեց տղային: Նա գլուխը կախ հավաքում էր իր ոտքերի շուրջ գտնվող խոտերը: Քեյլին հիշեց մի բան, որ մայրիկը մի ժամանակ ասել էր. *Ուշադիր եղիր երեխաների հանդեպ, ովքեր մենակ են:*

Քեյլին տխրեց: *Նա* նույնպես մենակ էր: Ոչ ոք չէր փորձում ընկերանալ *իր* հետ:

Ապա Քեյլին մտաբերեց այն պահը, երբ անցած տարի մկրտվեց: Նա խոստացել էր լսել Սուրբ Հոգուն: Գուցե Սուրբ Հոգին օգնում էր իրեն հիշել մայրիկի ասածները: Գուցե Սուրբ Հոգին հուշում էր իրեն խաղալ դեղին շապիկով տղայի հետ:

Քեյլին հառաչեց և ծնկի իջավ: Նրա սիրտը ջերմությամբ լցվեց: Նա մոտեցավ ու նստեց տղայի կողքին:

«Բարև»,- ասաց նա:

«Բարև»,- մռթմռթաց տղան:

«Ո՞րն է քո սիրած գույնը»:

«Հը՜մ . . . կանաչը»:

«Դա հրաշալի է: Ես սիրում եմ վարդագույնը»,- ասաց Քեյլին: «Դու ունե՞ս սիրած կենդանի»:

Տղան մի փոքր ուղղվեց և նայեց աղջկան: «Այո: Ես շատ եմ սիրում դինոզավրերին»:

«Օ՜, ես նույնպես: Ես սիրում եմ եղջյուրավոր դինոզավրերին»:

Տղան ժպտաց:

Ապա զանգը հնչեց: Քեյլին կանգնեց և հրաժեշտ տվեց տղային: Նա ժպտում էր, մինչ մենակ վերադառնում էր իր դասասենյակը: Գուցե նա չուներ լավագույն ընկեր, սակայն երջանիկ էր, որ մեկ ուրիշի ընդմիջումը մի փոքր ավելի լավն էր դարձրել: ●

Հեղինակն ապրում է Յուտայում (ԱՄՆ):



ՆԿԱՐԸ՝ ԲԱՐԲԱՐԱ ԲՈՆԳԻՆԻԻ

Ես շտապում էի հասնել դպրոց: Սակայն զգացողություն ունեցա, որ նախ պետք է մի տուփ չիպս վերցնեմ տանից: Ընդմիջումից հետո իմ ընկեր Դրյուն տխուր տեսք ուներ: Ես հարցրեցի նրան, թե ինչ է պատահել: Նա ասաց, որ մոռացել էր իր ուտելիքը: Ես հիշեցրի իմ վերցրած չիպսը և տվեցի նրան: Դրյուն ասաց . «Սա ամենալավ բանն է, որ դպրոցում երբևէ մեկն արել է ինձ համար»:

Դուրիամ Մ., 11 տարեկան, Յուտա, ԱՄՆ